[1] Դուրս գրման ամսաթիվ			Հաշիվ վավերագիր (ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման)	[2] Սերիա	[3] Համար
4	Հունիս	2019 թ.		Բ	0615306850
[4] Մատուցման ամսաթիվը					
22	Մայիս	2019 թ.			

Ճշգրտվող հաշիվ վավերագրի	
Սերիա	Համար

Ճշգրտվող հաշիվ վավերագիրի դուրս գրման ամսաթիվ		

Պայմանագիր	[5] Կնքման ամսաթիվ	[6] Համար

[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)

ԱԿՏ 01 Փորձագիտական փորձաքննության եզրակացություն, Կոմիտաս 38/3

[7.1] ՀԴՄ կտրոնի համար

Ծառայություններ մատուցող (աշխատանքներ կատարող) անձի

[8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)	0	0	0	9	9	7	1	3		
[9] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը										

[10] Անվանումը	«ՇԻՆՊՐՈԳՐԵՍ » Փակ բաժնետիրական ընկերություն (ՓԲԸ)	
[11] Բանկային տվյալները	ՅՈՒՆԻԲԱՆԿ ԲԲԸ	N 24100025558800
[12] Գտնվելու վայրը (հասցեն)	ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ԿՈՄԻՏԱՍԻ Պ. 56 շ. 67 բն.	
[13] Լրացուցիչ տվյալներ		

Ծառայություններ (աշխատանքներ) ստացող անձի

[14] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը)	0	2	6	3	1	2	6	3
[15] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը								

[16] Անվանումը	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» Պետական կառավարչական հիմնարկ		
[17] Բանկային տվյալները	Երևանի թիվ 1 ՏԳԲ	N 900011000834	
[18] Գտնվելու վայրը (բնակության վայրը)	ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5		
[19] Լրացուցիչ տվյալներ			
[20] Ում միջոցով	Անուն, ազգանուն		
	Լիազորագիր	Համար	
		Ամսաթիվ	

[21] Ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) ծավալի և վճարման ենթակա գումարի հաշվարկը

NN Հ/Հ	Ծառայությունների (աշխատանքների) անվանումը (բովանդակությունը)	Չափի միավորը	Ընդհանուր ծավալը միավորների քանակով	Միավորի գինը	Գեղչ(%)	Արժեքը
1	2	3	4	5	6	7
1	Դատաշինարարական փորձաքննություն N14107917 քրեական գործով	հատ	1	200000		200000
Ընդամենը						200000

Ծառայություն մատուցող (աշխատանք կատարող)՝ GASPARYAN MARIAM 7208730571

(ստորագրությունը, անունը, ազգանունը)

Ծառայություն (աշխատանք) ստացող՝

(ստորագրությունը, անունը, ազգանունը)

04/06/2019 16:02:22

ՈՐՈՇՈՒՄ

Դատաշինարարական և դատապրանքագիտական համալիր
փորձաքննություն նշանակելու մասին

18 փետրվարի 2019թ. ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի Արաբկիր վարչական շրջանի քննչական բաժնի ավագ քննիչ՝ Ա.Ռ.Փիլոյանս, քննարկելով վարույթումս քննվող թիվ 14107917 քրեական գործի նյութերը.

ՊԱՐԶԵՑԻ

«Հայր և որդի Ադամյաններ» ՍՊ ընկերության տնօրեն՝ Ռաֆիկ Ադամյանը ունենալով գրավոր կնքված կապալի պայմանագիր «Հինգերորդ աստղ» ՍՊ ընկերության հետ, 2006-2010թթ ընթացքում Երևան քաղաքի Կոմիտաս 38/3 հասցեում կառուցվող բազմաբնակարան շենքի կառուցապատման ժամանակ, իրեն վստահված գույքի նկատմամբ ունենալով տնօրինման և կառավարման լիազորություններ, վերոհիշյալ շենքի կառուցապատման ընթացքում դիտավորյալ ամրանների տեղադրման աշխատանքները կատարել է շենքի նախագծի էական խախտումներով՝ 20մմ տրամագծի ամրանների փոխարեն օգտագործելով 18մմ և 16մմ, իսկ 16մմ տրամագծի ամրանների փոխարեն՝ 14մմ և 12մմ տրամագծի ամրաններ, որի արդյունքում յուրացման եղանակով «Հինգերորդ աստղ» ՍՊ ընկերությունից հափշտակել է առանձնապես խոշոր չափերով՝ շուրջ 25.000.000 ՀՀ դրամ:

Դեպքի առթիվ 2017 թվականի մայիսի 24-ին Արաբկիր վարչական շրջանի քննչական բաժնում հարուցվել է թիվ 14107917 քրեական գործը, կատարվում է նախաքննություն:

Նախաքննության ընթացքում <<Հինգերորդ Աստղ>> ՍՊ ընկերությունը ճանաչվել է տուժող:

Գործով վկա՝ Վարդան Առաքելյանը ցուցմունք է տվել այն մասին, որ հանդիսանում է <<Հինգերորդ Աստղ>> ՍՊ ընկերության տնօրենը: 2006 թվականին Երևան քաղաքի Կոմիտաս 38/3 հասցեում բազմաբնակարան շենք կառուցելու նպատակով կապալի պայմանագիր է կնքել <<Հայր և որդի Ադամյաններ>> ՍՊ ընկերության տնօրեն՝ Ռաֆիկ Ադամյանի հետ: Իրենց մինչև կնքված պայմանագրի համաձայն՝ <<Հայր և որդի Ադամյաններ>> ՍՊ ընկերությունը պարտավորվել է շինարարությունը կատարել համապատասխան փորձաքննություն անցած և Երևանի քաղաքապետարանի կողմից հաստատված նախագծին համապատասխան: Այն ինչ վերոհիշյալ ընկերությունը Երևան քաղաքի Կոմիտաս 38/3 հասցում 2006-2010թթ ընթացքում բազմաբնակարան շենքի շինարարական աշխատանքները կատարել է քաղաքաշինական նորմերի և նախագծի էական շեղումներով, մասնավորապես՝ ամրանավորման աշխատանքները կատարվել են ավելի փոքր տրամագծի ամրաններով, ամրանների քայլերի խախտումներով, որոնք չեն համապատասխանում նախագծում առկա տվյալներին, իսկ շենքի երեսպատման աշխատանքներում թույլ տրված քաղաքաշինակարան նորմերի խախտումների հետևանքով շենքի տարբեր հարկերից սալիկները թափվում են:

Դեռ նյութերի նախապատրաստման ընթացքում Վ.Առաքելյանը ներկայացրել է <<Շինպրոգրես>> ՓԲ ընկերության կողմից իրականացված մասնագիտական եզրակացությունները, որոնց համաձայն՝ Երևանի Կոմտասի 38/3 հասցեի բազմաֆունկցիոնալ շենքի երկաթբետոնյա միաձույլ կոնստրուկցիաների բացված հատվածների ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ ամրանավորումը

իրականացվել է սահմանված կարգով հաստատված և դրական փորձաքննություն անցած նախագծի խախտումներով, ինչը հանգեցնում է շենքի հաշվարկային սեյսմակայության մակարդակի իջեցման:

Շենքի նախագծի հեղինակ՝ <<Նարեկ Սարգսյան>> ճարտարապետական արվեստանոց>> ՍՊ ընկերության կողմից 26.12.2016թ-ին տրված տեղականքի համաձայն՝ երեսպատման աշխատանքները կատարվել են քաղաքաշինական նորմատիվ ակտերի և հաստատված նախագծի պահանջների կոպիտ և անթույլատրելի խախտումներով, ինչի հետևանքով դրանք թափվում են:

Նախաքննության ընթացքում 21.06.2017թ-ին նշանակվել է դատաշինարարատեխնիկական, դատահաշվապահական և դատաապրանքագիտական համալիր փորձաքննություն, որի կատարումը հանձնարարվել է ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ին:

26.10.2017թ-ին ստացվել է Հմ՝ 17-1232 եզրակացությունը, սակայն ստացված եզրակացությամբ հնարավոր չի եղել պատասխանել որոշմամբ առաջադրված մի շարք հարցերին՝ մասնավորապես շենքի բետոնածածկ հատվածներում ամրանների տեղակայությանը, տրամագծի և քայլերի համապատասխանությունը նախագծին և դրանից բխող ապրանքագիտական բնագավառին վերաբերող հարցերին:

Դեռևս հիշյալ փորձանքնության ընթացքում ստացվել է տուժողի ներկայացուցչի դիմումն այն մասին, որ դեռևս Աջափնյակ և Դավիթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի կողմից քննված ԵԱԴԴ/0199/02/11 քաղաքացիական գործով դատարանի կողմից Երևան քաղաքի Կոմիտաս 38/3 հասցեի շենքի շինարարության ժամանակ ամրանավորման աշխատանքների համապատասխանությունը հաստատված նախագծին պարզելու և քաղաքացիական գործով մի շարք այլ հանգամանքներ պարզելու նպատակով նշանակվել է դատաշինարարատեխնիկական, ապրանքագիտական և հաշվապահական համալիր փորձաննություն, որի կատարումը ևս հանձնարարվել է ՀՀ <<Փորձաքննությունների ազգային բյուրո>> ՊՈԱԿ-ին: Ստացված փորձաքննության եզրակացությամբ նշվել է, որ բետոնածածկ աշխատանքներում ամրանների առկայության, դրանց տրմագծերի մեթոդոլոգիա և սարքավորումներ քաղաքաշինության բնագավառում չկան:

Վերոգրյալից բխում է, որ նշված փորձագիտական հիմնարկում բացակայում են համապատասխան սարքավորումներ բետոնածածկ աշխատանքներում ամրանների առկայության, դրանց քայլերի և տրամագծերի, ինչպես նաև գործի քննության համար էական նշանակություն ունեցող այլ հանգամանքներ պարզելու համար: Նման սարքավորումներ առկա է <<Քաղաքաշինական ծրագրերի փորձագիտական կենտրոն>> ԲԲԸ-ում և ՀՀ վերահսկիչ պալատում:

Հիշյալ սարքավորումների անհրաժեշտությունն առաջանալու պայմաններում, դրանք վարույթն իրակացնող մարմնի կողմից ապահովելու և համապատասխան փորձագետ ներգրավելու վերաբերյալ գրավոր տեղեկացվել է ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ին:

ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ից 30.08.2017թ-ին Արաբկիր վարաչական շրջանի քննչական բաժին ստացվել է պատասխան գրություն այն մասին, որ շինարարատեխնիական մասով որոշմամբ առաջադրված հարցերը կապված են իրականացված երկաթբետոնյա կրող և այլ տարրերի կառուցվածքներում ամրանավորման առկայության, փասատացի տեղադրված ամրանների տեսակների և ամրանավորման տեղադրման երկրաչափական բնութագրերի պարզաբանման հետ՝ որը հնարավոր չէ

իրականացնել ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի տեխնիկական հնարավորությունների շրջանակում:

Բացի այդ նույն գրությամբ վարույթն իրականացնող մարմնին առաջարկվել է որպես փորձագետ ներգրավել համապատասխան կազմակերպությունների մասնագետներին:

Վարույթն իրականացնող մարմինը սույն փորձաքննության իրականացման համար համապատասխան սարքավում և մասնագետ ներկայացնելու հարցով դիմել է ՀՀ ՔԿ դեպարտամենտ:

17.03.2018թ-ին ՀՀ քննչական կոմիտեի դեպարտամենտից ՀՀ ՔԿ ԵՔՔՎ Արաբկիր վարչական շրջանի քննչական բաժին է ստացվել գրություն այն մասին, որ թիվ 14107917 քրեական գործով նշանակված դատաշինարարական փորձաքննությունը կիրականացվի «ԱՐՄԻՆԻՍ» ՍՊԸ-ի տնօրեն Հ.Խաչատրյանը՝ «proced profometet 5+» model S/SKAN պրոֆեսիոնալ սարքով:

17.03.2018թ. նշանակվել է դատաշինարարական, դատահաշվապահական և դատաապրանքագիտական համալիր լրացուցիչ փորձաքննություն:

Գրություն է ուղարկվել «ԱՐՄԻՆԻՍ» ՍՊԸ-ի տնօրեն Հ.Խաչատրյանին՝ փորձաքննության ընթացքի վերաբերյալ տեղեկություններ ստանալու նպատակով, որին ի պատասխան ստացվել է գրության, համաձայն որի չի կարող փորձաքննություն իրականացնել:

Դատաշինարարական, դատահաշվապահական և դատաապրանքագիտական համալիր լրացուցիչ փորձաքննության կատարումը 15.10.2018թ. թողնվել է անկատար:

Նկատի ունենալով, որ նշանակված փորձաքննությունների արդյունքում չի պարզաբանվել սույն քրեական գործի լուծման համար էական նշանակություն ունեցող մի շարք ելակետային հարցեր, մասնավորապես՝ շենքի բետոնածածկ հատվածներում ամրանների տեղակայությունը, քայլերի հեռավորությունը և տրամագծերի համապատասխանությունը շենքի նախագծին, ուստի անհրաժեշտ է նշանակել դատաշինարարատեխնիկական և դատաապրանքագիտական համալիր փորձաքննություն ինչպես սույն հարցերը, այնպես էլ գործի համար կարևոր նշանակություն ունեցող այլ հարցերը պարզելու համար, որոնց կատարման համար անհրաժեշտ են դատական շինարարատեխնիկական և դատական ապրանքագիտության բնագավառի հատուկ գիտելիքներ, ուստի ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ հոդվածի 4-րդ մասի 5-րդ կետով, 243-246-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇԵՑԻ

Թիվ 14107917 քրեական գործով նշանակել դատաշինարարական և դատաապրանքագիտական համալիր փորձաքննություն, որի կատարումը հանձնարարել «ՇԻՆՊՐՈԳՐԵՍ» ՓԲԸ-ի տնօրեն Յու.Մատինյանին, վերջինիս ճանաչել փորձագետ, նրան նախազգուշացնելով ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

1. Պարզաբանման համար փորձագետին առաջադրել հետևյալ հարցերը.

ա/Երևան քաղաքի Կոմտաս 38/3 հասցում գտնվող բազմաբնակարան շենքի շինարարական աշխատանքները համապատասխանում են կառուցապատման նախագծին և այլ շինարատեխնիկական /տեխնիկանորմատիվային/ փաստաթղթերին, թե ոչ, եթե չեն համապատասխանում, ապա ինչ ձևով են արտահայտվում խախտումները,

բ/ Եթե «Հայր և որդի Ադամյաններ» ՍՊ ընկերության կողմից ամրանավորման աշխատանքներում թույլ տրվել են տրվել խախտումներ, ապա դրանք հանգեցրել են շենքի

սեսմակայունության նվազեցմանը, թե ոչ, եթե այո, ապա դրանք հնարավոր է վերականգնել, թե ոչ, եթե այո ապա, ինչ եղանակով,

գ/ եթե Երևան քաղաքի Կոմտաս 38/3 հասցում գտնվող բազմաբնակարան շենքի շինարարական աշխատանքները /այդ թվում ամրանավորման/ չեն համապատասխանում կառուցապատման նախագծին, ապա որքան վնաս է պատճառվել «Հինգերրորդ աստղ» ՍՊ ընկերությանը 2006-2010թթ. դրությամբ:

Փորձագետին խնդրել պատասխանել նաև այն հարցերին, որոնք թեև չեն առաջադրվել սույն որոշմամբ, սակայն կառաջանան փորձաքննության ընթացքում, կմտնեն փորձագետների իրավասության մեջ և որոնց պարզաբանումը կարող է կարևոր նշանակություն ունենալ փորձաքննության լիարժեքության ապահովման համար:

Ավագ քննիչ՝ Ա.Ռ. ՓԻԼՈՅԱՆ